

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սարեկանի վեցանկայ	6 "
Արսասահմանի համար սարեկանի	15 "
վեցանկայ	8 "
Ամերիկայի համար սարեկանի	3 ցր.
վեցանկայ	1.50 "

Ծանուցման տողը սուս շին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքին աւելի ակզաններու համար 20 0/0 զեղչ կրուայ:

Վառնայի համար ձեռքի 40 սանթիմ

# ՇՈՐՈՒՄ

Կարենի և Կարենի Կարենի Կարենի

Редакция на вѣстникѣ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charcum“ (Bulgarie) Yarna

Պուշկարիոյ համար ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք և ձեռնարկ

## ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՐԻՆ. ԲԱՂՍԲԱՎԱՆԻ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԵՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՈՒՄ ՕՐԵՐԸ

ՇՈՐՈՒՄ Ի ԲԱՃԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՃԱՆԳԻՆԸ ՊԷՏԻ Է ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐԷ

### ԹՈՒՍ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՈՑՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆԷՔ ՉՈՒ Ի

Վերջին պատերազմը ջախջախիչ փաստերով ապացուցեց որ ցարերի ինքնակալ ռեժիմը փոփոխելու է և նոյնիսկ ուսու, քաղաքակրթութիւնը շատ յետամնաց, ժողովրդի համար այլևս անտանելի դարձել, ուրեմն այլևս իր գոյութիւնը շարունակելու իրաւունքից զուրկ է:

Ուսու ներքին կեանքի տուած փաստերն էլ սակաւ ջախջախիչ չեն ցարիզմի անպէտքութեան և գոյութեան իրաւազրկումի համար: Ներքին շատ գաւառներում անիշխանութիւն է տիրում. մի տեղ զօրք չեն ուզում տալ, մի ուրիշ տեղ աւերք, երրորդ տեղում հալածում են ցարի ամենաբարձր և ամենափոքր պաշտօնեաներին, չորրորդ տեղում բացարձակօրէն ապստամբում են զէն ի ձեռին:

Այս բոլորը պատմական երկաթէ տրամաբանութեամբ հաստատում են այն անուղք ճշմարտութիւնը թէ՛ ամեն մի ռեժիմ իր ժամանակն ունի և իրեն ենթարկվելու յարմար ժողովուրդ: Պարզ է որ ժամանակի յարմարութիւնը կախված է ժողովրդների կեանքի պահանջներից և այդ պահանջների մասսայական ըմբռնումի շարժից: Երբ այդ պահանջները այն ձեւն ու շարժի են ստանում, որ այլ էւս տիրող ռեժիմը անկարող է նրանց գոհացում տալ առանց իր սիրքը խաղտելու և տրամադիր չէ ոչ մի զիջողութեան իր նախապէս վայելած առաւելութիւնների վերաբերմամբ, նա պէտք է խորտակվի: Գա ընկերաբանական պատմական անուղք վճիռէ, որից խուսափել չեն կարող նոյնիսկ աշխարհ սարսեցնող ցարերը:

Այս, ցարերն էլ կր են թարկվեն այդ իրենց գոյութիւնը շնչող որոշումին, բայց ի հարկէ ոչ այնքան դիւրութեամբ, ոչ առանց մաքառելու: Եւ Ռուսիայում այդ արիւնոտ մաքառու-

մի խոշոր շրջանն է որ սկսում է... մի շրջան ուր մարդկային արիւնի հեղեղները թերեւս ուսական մայր գետերի շափ մեծ լինեն: Բայց այդ էլ պատմական անուղք որոշում է. ռեժիմները չեն խորտակվում առանց արեան հեղեղների, և ժողովուրդները չեն ազատվում իրենց բռնակալներից առանց մեծաքանակ զոհերի:

ՎԱՐՊՈ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

(Արտասահմանում հրատարակվող ուսու «Ժիզն» ամսագրից)

(Շար. Ասխուրյ Իրեհն)

Երբեմն Վրաստանի և Հայաստանի Ռուսաստանին կցումը բարեք էր համարվում: Հայ բուրժուազիայի փառանքած հայկական հատարմութիւնը հիմնվում էր երախտագրական զգացմունքի վրայ, որ ունէր դէպի ուսական գաւը պարսիկների դէմ երկարատեւ մաքառումի մէջ յողնած հայ ժողովուրդը, ու այժմ մի տեսակ թեթեւութիւն էր զգում օրս պիտակ արծիւի» հովանիի տակ: Մեր ժողովուրդը ունենալով քաղաքակրթական փառաւոր անցեալ, չէր կարող դիմաւալ պարսկական շահերի բարբարոսական լծին, որը խաղաղ և աշխատասէր ժողովրդին չէր թող ապիս անձնատուր լինել իր առջեւ գրուած սնտեսակն և քաղաքական խնդիրներին:

Այդ զօրեղ ճնշումը աւելի զգում էին Ղարաբաղի ազատ գաւակները կարող և գեղեցիկ իրենց կառուցութեան մէջ, Ղարաբաղի հերոս Գաբիթ Բէկի ապստամբական փոքրիկ շարժումները վերածվեցին ժողովրդային ընդհանուր շարժման: Ղարաբաղի ներքին պարսից լծի դէմ մղած իրենց ուժերը գերազանցող կուրը տեւեց ամբողջ դար և վերջացաւ Հայաստանի մէջ մասը Ռուսաստանին կցելովը:

Հայերի ազատութեան համար մղած այդ կուրը առաջինը չէր և ոչ վերջինը: Հայ ժողովրդին ճակատագրով ձեռք կրկին և չուտով իր դէպի ազատութիւն ունեցած ընդունակութիւնը ցոյց տալ, Բայց Ռուսաստանին կցվելուց յետոյ, հայ ժողովրդին որոշ չափով ազատութիւն տրվեց, որից նա օգտվեց լայնօրէն:

Մեր ժողովրդական առաջին գործիչները ժողովրդի ծոցից են դուրս եկած, և նրա պէս սիրելով հայաստանի լեռներն ու հովիտները այդ միջոցին մեզ ժողովուրդներին արեւմտեան քաղաքակրթութիւնը:

Այդ գործիչները վանքերի խցերից դուրս հանեցին հայ գրականութիւնը և կրթութիւնը, որոնք պարսկական լծի ժամանակ պահված էին այդ վանքերում, հետագա ժողովրդից, հին և անհասկանալի լեզուով ու աստուածաբանական ուղղութիւն ստացած ժողովուրդը անտարբեր էր դէպի աստուածաբանական դպրոցները: Այդ պատճառով էր որ մեր առաջին գրագէտները իրենց վրայից թօթափելով սխոլաստիկական բոլոր փոշիները ու զինված ժողովրդական ոգով, միանգամից գրաւեցին ժողովրդի համակրութիւնը:

Այդ գրագէտները սկսեցին ուսումնասիրել ժողովրդական կեանքը և իրենց եզրակացութիւնները յայտնել ժողովրդին պարզ և հասկանալի լեզուով:

Առաջին հայ պարզ լեզուով գիրքը, որը վերջը զարգանալով դարձաւ կովկասահայերի գրական լեզու, «էրք Հայաստանի» նկարագրում է ժողովրդական հերոս Աղասու սիրազորութեան գէտ մղած կուրում:

Այդ գիրքը մեծ չափով տարածվեց ժողովրդի մէջ, որի վերջը դեռ թարմ յիշատակ էր պարսկական բռնութեան լծից, ինչպէս դէպի ազատութեանը ունեցած սիրուն, որը նրանց համար արժեւ էր երկարատեւ անընդհատ մաքառում. իսկ գրքի հեղինակին ուսանող Սաչատուր Արովեանին ժողովուրդը պատկեց ամենախորին յորգանքի պսակով ու մինչեւ անգամ պատուեց առասպելներով:

Վէրք Հայաստանին կիմնաքարը եղաւ ազգային վերածնութեան խոշոր գրականութեան մէջ, Այդ ժամանակ վան ժողովրդական գործիչների առջեւ շատ գործ կար: Պէտք էր ոչնչացնել պարսից բարբարոսութեան թուրմ ազդեցութեան հետքերը և արեւմտեան քաղաքակրթութեան համաձայն նոր կեանք ստեղծել:

Վաթսուրական թեւակաների հրապարակախօսները, մասնաւորապէս Նազարեանը, նկատեցին ժողովրդի գրեթե որ ստրկութեան մէջ ձեռք բերած բոլոր թերութիւնները և յանուն ժողովրդային սիրուն հարուածեցին անխնայօրէն: Չը մտապղծեց և հոգեւորականութեան գործած անբարոյացուցիչ ազդեցութիւնը: Մեր հրապարակախօսների կախը հոգեւոր-

ականութեան դէմ տարվեց արտասովոր յաջողութեամբ:

Նոյն թեւականների երկրորդ գրաւակա նայրանաւանդն էր, հայ առաջին սոցիալիստ իր հեղինակութիւնների մէջ նա ներկայացնում էր իրական ազատութիւնը, սրբ հիմնովում է արտագրութեանց բնդ հանուրի հաւասարապէս օգտուելու վրայ: Այդ պատճառով պէտք էր որ նա բանդեան ծանօթանար Պետրօպօլիսի ամրոցի նկուղների նեւ:

Նայրանդեանցի ազդեցութիւնը մեր ժողովրդի վրայ զգացվում է մինչեւ օրս էլ. նրա գրած երգը խալու հուժասին, որը եղբորը ազատութեան համար արիւն թափելու է ու զարկում, մեր ազգային ազատութեան օրհներգն է:

Այդ ուսուցիչներից պատրաստուած երիտասարդութիւնը 70 թեւականներին սկսեց մտնել ժողովրդի մէջ և հետզհետէ լայն շափելով իր ուսուցիչներին զաղափարները տարածել:

(Շարունակելի)

### ՀԱՐՈՆԱԿԱՆ ԻՈՐ ՓՈՒՍՈՒՄԻՒԹԻՒՆԸ

Ռուսական կառավարական պաշտօնեաներու և մեծաւորներու ցաւազար նախագուշակումները անգամ մը եւս օքը ցնդեցան ու անոնք նորէն ինչպէս սղաւթի հոգիտանջութեան մէջ: Ինչու սակէ յանի մը շարախներ առաջ ճարտական ֆինանսական մասալուա տաղապին սնուչ ցնորքներով օրորուող այդ թշուառականները այսօր սեւան թէ ճարտիւնը շահագրգիռ է զատ ֆինանսական խոշոր գողներու իր առջեւ կր գտնէ գոմարներ, կամաւոր փոխառուներ, որոնք գոհացում տալով շահեղութիւն պէտքերուն, անսահման բազմանք մը կը յայտնեն դեռ աւելին ևս արձանագրելու:

Մեր խօսքերը թուանշաններով արձանագրելու համար, կր դրենք այստեղ ամփոփ հաշիւը այն գումարներուն, որոնք միմայն կարճատեւ ժամանակի մը ընթացքին երեւան թերութեան Անգլիական և Ամերիկեան փոխառուներու կողմէ:

Ճարտիւս խնդրած էր Անգլիայէ 15 միլիոն ստերլինգի փոխառութիւն մը, Ամսոյա 20 միլ (Ն. Տ.) բացուեցաւ այդ փոխառութեան արձանագրութիւնը Լոնտօնի երեք նշանաւոր պանքաներու կողմէ և օչրա ժամուան ընթացքին, մտուա որսուցա 200000 մանակցողներու միջոցով այդ գու-

մարը արդէն փակուեցաւ, հակառակ այն իրողութեան, որ տակաւին հազաներ գիծելով իրենց մասնակցութեան բաժինը կը պահանջեն եւ կասկած չկայ, որ եթէ մօտ ժամանակին լոյս բնծայութի գումարի և մասնակցողներու պաշտօնական ցանկը, ընդհանուր հաշիւը հասած պիտի ըլլայ առնուազն 6-7 անգամ աւելին, այսինքն 110-150 միլիոն ոսկի ստերլինկ :

Լօնտօնի այդ պանթաները երկար ատարներէ ի վեր եռանդուն դէպքեր մը ականատես եղած չէին երբէք : Հաստատութեան բացման ժամէն 1-2 ժամ առաջ արդէն փողոցը ահագին բազմութիւնով մը խռնուած՝ ոտիկաններու հսկող բանակ մը հազիւ հազ կրցած էր կարգը պահել : Իսկ այլ աւելի ահեղի եղած է տեսարանը դռնելու բացման րոպէին, որ արձանագրութեան առաջնութիւնը ստանալու հզօր թափով, նոյնիսկ սեղի ունեցած են լուրջ կոխուներ միմեանց հետ՝ ներս խուժուած պահուն... Պանթերու բացման ժամը առաւօտեան 10 է ու արդէն ցորեկուան 2.30 ին ցանկացուած գումարը գողտուած ըլլալով վերանակիչները փակած են արձանագրութիւնը մինչեւ ցորտնուրի թիւնութիւն, որը ինչպէս վերեւ յիշեցինք, այս վերջին երկու երեք օրն եւս շարունակուելով՝ առնուազն կը հասնի 100-150 միլիոն ոսկիի, որովհետեւ մասնակցութեան պահանջները սարսափելի են Անգլիոյ ամեն մէկ անկիւնէն...

Այս տակաւին Լօնտօնի ցուցակն է, իսկ առասպելական գումարներու աշխարհ Ամերիկան քաջ մը եւս կը գերազանցէ նախորդը :

Առաջին անգամը չէ, որ ձառնի համար փոխառութիւն կը բացուի հոն : Քանի քանի անգամներ Նիւ Եօքքի դրամատէրները հսկայ գումարներ արձանագրեցին, ուրիշ մը բացուեցաւ միմիայն օտար, մասնաւորապէս հրէայ վաճառականներու մէջ, որ նոյնպէս ստուար գումար մը առաջ բերաւ, իսկ հետ մը որ արձանագրած էին զրոյ վեց՝ Նիւ Եօքքի ճաբոն վաճառականները Եւրոպեացիներու յաղթանակէն վերջ, փոխառութիւն մը աւելի իրենց նուիրատուութիւն իրենց մէջ սարքուած պանթէթի մը մէջ, հասած էր երեք միլիոն տոլարի... Բայց այսօր, երբ կրկին կը բացուի փոխառութեան արձանագրութիւնը, եռանդը քառապատիկ աւելի է քան երբէք... Եւսնալքի դրամատէրները, հաւատացնելով միա՛միտներուն՝ որ վերջին բանորական զէպքերու միակ ու գլխաւոր զեկաւարիները եղան Անգլիական և ուրիշ օտար առևտուաց պետութիւններու ֆինանսիստները, որուն իրենց ապացոյց՝ ձառնի օգնելու ներկայ փութիւնները, նպատակ ունենալով առևտուական հզօր պետութեան ոյժերը ջլտելու ներքին խռովութիւններ յառաջ բերելով...

Ա. ԱՄՅԵՏԵՍՏՐՈՎ  
—\*—  
ՎԻԿՏՈՐԻԱ ՊԻՎԼՈՎԻԱ  
—o—  
(Տօնախմբութիւն)  
—o—  
(Գրագիտի յիշողութիւններ ից, Ամրան արկածներ բաւական սարսիհակ հաւասարակութեան մեջ)  
—o—  
(Թարգմ. ուսերէնից)  
Ե.  
(Շար. նախորդ թիւին)

Անպիտան տիտղոսը տալոց յետոյ, Արինան աւելցնում էր—վրին տալով պէտք է դուրս անել : Ասկայն Իվան Աֆանասիչի չէին վանում, իսկ կողմնակի կերպով լսում էին որ արդէն հինգերորդ տարին է որ նա, իր փոքրիկ կալուածքը աճուրդով ձախելուց յետոյ եկել

լին տոլարի... Բայց այսօր, երբ կրկին կը բացուի փոխառութեան արձանագրութիւնը, եռանդը քառապատիկ աւելի է քան երբէք... Եւսնալքի դրամատէր մը առաջարկ դրած է երեք միլիոն անգլիական ոսկի, իսկ շարք մը ուրիշներ այլ դրամ են 1 կան միլիոնի համար...

Ասկէ աւելի փառաւոր ապտակ մը անկարելի էր ցարի միապետական տաճարին սպասարկուներուն և ուրեմն երբէք անակնկալ մը պիտի չըլլայ, երբ հոս յայտնեք թէ՛ արդէն Ռուսաստանի զանազան անկիւնները նոյնիսկ կրօնականները սկսած են մօտերս Անգլիոյ դէմ կրգոնել իրենց ժողովուրդը, հաւատացնելով միա՛միտներուն՝ որ վերջին բանորական զէպքերու միակ ու գլխաւոր զեկաւարիները եղան Անգլիական և ուրիշ օտար առևտուաց պետութիւններու ֆինանսիստները, որուն իրենց ապացոյց՝ ձառնի օգնելու ներկայ փութիւնները, նպատակ ունենալով առևտուական հզօր պետութեան ոյժերը ջլտելու ներքին խռովութիւններ յառաջ բերելով...

Չը խորհրդէք դեռ աւելին... Երկգոյն անուազուի ճիւղին սպասարկները ընդունակ են ամեն ստորունութեանց :

Բովանդակ Ռուսաստանը այս պահու կրակի մէջ է, բայց և այնպէս տակաւին երկու օր առաջ էր որ Բեթերսպուրկէն պաշտօնապէս կը յայտարարուէր, թէ՛ «հակառակ ընդհանուր յօժարամտութեան՝ պատերազմին վերջ մը գնելու համար, Ռուսաստան առաջարկած չէ երբէք խաղաղութեան պայմաններ և ոչ ալ պատրաստած է նման պայմաններ» :

Իսկ միւս կողմէ, ուրիշ հեռագրական լուր մը կը հաղորդէ որ «Ռուսաստան անուղղակի կերպով յայտնած է ճարտական կառավարութեան խաղաղութիւն կայացնելու ժխտական պայմանները—այսինքն, չըտալ հող, և տնօրէնել, թողով ձառնի որոշել, թէ կարող է բանակցութիւններ սկսել այդ պայմաններուն վրայ» :

Խաղաղութեան աճարարութիւնը բաւական դեր կատարեց, ուստի հիմա ալ նոր խաղի ետեւէ են ուսուցանանքը : Բայց ձառն վերջնականօրէն յայտարարած է՝ որ այսու-

հետեւ ուշադրութիւն պիտի դարձնէ միմիայն ուղղակի ցարէն հասած բանակցութեանց, առաջարկելով միանգամայն մօտ 200,000,000 անգլ. ոսկի իբրեւ պատերազմական տուգանք, ուսու բանակին Մանչեսթրայէն բոլորովին հեռացուց և այլն :

Ու այս աւելորդ է ըսել, Միքատոյի իւրօրոքութիւնն է : Մ. ՅՈՒԱԿ

ՌՈՒՍ ԿԵԱՆՔԵՆ

ՌՈՒՍ ՍՊԱՆԵՐԸ ԵՒ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ

«Լը ժուռնալ» թերթը հրատարակած է իր Մանչեսթրայի թղթակից Լիւգոփիկ Նոտոի մէկ յօդուածը, զոր թղթակիցը հեռագրած է ձառնիւայէն, ուր իբր գերի տարուած էր : Այդ հեռագրին վերջին տողերը շատ ուշադրաւ են և հետեւեալն են :

«Լիւսոնակի ճակատամարտէն անմիջապէս ետքը, մանաւանդ Սանտէպոլին քով ուսանող պարտութեանէն յետոյ, պատերազմին բոլոր անկեղծ և լուրջ հանդիսատեսները յայտարարեցին որ հաշտութիւնը անհրաժեշտ է : Այսօր ամէնքն ալ համաձայն են որ ժամանակաւոր հաշտութիւն մը այս կայացումն էն դուրս ելլալու միակ ելքն է :

Ռուս սպաներու և զինուորներու հազարի թիւ մը այս կարծիքին համաձայն են : մաս մը բացառապէս մաս մը քաղաքի :

Ռուս զօրքը հրաշալի քաջութիւն ցոյց տուաւ, քաջութեամբ կռուեցաւ, իր պատակասութիւնը կատարեց, բայց մէկ կողմէն բոլորովին զուրկ էր ռզեւորու թիւնէ : Ռուս զօրքերը մեռնելու կերթան, բայց անոնք չունին գիտակցութիւնը զորին օգտակարութեան և արդարութեան, որուն համար կը կռուին :

Ռուս սպաները այլեւս տխուր փորձով հասկցած են թէ անկարելի է արմատական բարեփոխումներ կատարել ուսու զօրքին մէջ որպէս զի կերպով մը ուսական գրօշակները յաղթանակ տանին : Այդ բարեփոխումները չեն կրօնար իրագործուիլ ճարտական կրակներուն տակ : Նոյն կերպերը որ կը ժանդոտեն ամբողջ Ռուսիան, իրենց կատաղութեամբ հասած են և զօրքերու մէջ :

Այս պատճառով է որ ներկայ պայմաններուն մէջ պատերազմին շարունակութիւնը Ռուսիոյ գլխուն մեծ աղէտ պիտի բերէ :

«Ռուսկոէ Սլոյժ» թերթը կիմանայ որ Սինոդի բարձրագոյն Պօպէսօնօսոսցիւր հրատարակած տըւած է : «Խաւարապետին» այդ անսպասելի վարմունքը կը բացատրուի անով, որ ուսու հոգեւորականութեան կողմէն բազմաթիւ բողոքներ ստացուած են այն աւթիւ, որ քաղաքական իշխանութիւնը ոտնձգութիւններ կընէ եկեղեցիին իրաւունքներուն և աւանդութիւններուն դէմ :

Ինչպէս կերբէի այս բողոքները տեղի կունենան վերջերս կառավարութեան գէպի ազանդաւորները բռնած մեղմ դիրքին և շատերը բանտերէն, վանքերէն և աքսորաւայրներէն ազատուին համար :

Իսկ Բօպէսօնօսցիւր խաւարապետն ալ ուսու եկեղեցիին խաւարամտութեան ամենաշեղծ պաշտպանը ըլլալով, այլեւս սրբապաղովութիւն կը համարէ իր պաշտօնը վարել :

Եթէ այդ լուրը ճիշդ է, ուսուները միայն հրճուիլ կրնան : Թէեւ Ռուսիոյ մէջ Բօպէսօնօսցիւրի հաւատարիմ և նման տեղաւորներ գեռ շատ կը գտնուին : ...

Վիկտորիա թոյլաութեամբ տեղաւորվել է Պրովոսլայուս, երեք օրով եւ էլ չէ հեռացել նստելով պրովոսլայցիներին մօտ եւ առանց մի բանի օգտակար լինելու :

Վիկտորիա Պավլովնան երբէք նըրա հետ չէր խօսում—գոնէ իմ ներկայութեանը : Ինքը Աֆանասիչն էլ Վիկտորիայի մօտ իրան այնքան լաւ չէր զգում, ճնշվում էր, նկատելի կերպով խուսափում էր Վիկտորիային յաճախ հանդիպելուց : ու օրիորդի ձայնը լսած միջոցին սովորաբար շտապում էր անհետանալ, կարծես օդի մէջ ցնդվելով : Արինա Գեօրգիւսովնան Աֆանասիչի հետ շատ կոշտ եւ կծու կերպով էր վարվում :

—Կուրանամ թէ, մի անգամ ես լսեցի պատուհանիս տակից Արինայի ծաղրական ու կծու ձայնը, տեղից շարվել չըկարողանամ, եթէ ես ազնւականուհի չը դառնամ : Որովհետեւ ես երկաթբուրդ եմ որ Աֆանասիչը մեր որբերիս շուրջը միշտ ցցվում է նրա համար, որ ինձ, այսրիս հետ ամուսնանայ : Որպէս զի քեզ, գանձս գերեզման զննել, իսկ

ազնւականի տիտղոսը ինքս առնեմ... Իմ իջի այլոց Աֆանասիչը ոչ ոքի չէր խանգարում : Ես շատ քիչ էի տեսնում նրան, որովհետեւ նա շատ սիրահար էր երգող թուղաններին եւ ամբողջ օրերով կորսվում էր անտառներում, թակարթներ գնելով թըսչուններ բռնելու համար : Կարծեմ սուսկի եւ ելակի ետեւից էլ էր շատ թափառում որովհետեւ կապիկ նման անուշաւեր էր :

Մի անգամ ես ու Բուրուրը Աֆանասիչին հանդիպեցինք պուրակում, մի գիւղացի դեռափթիթ աղջկայ հետ երկար, աւելի քան երկդիմի փոփոքի մէջ : Աղջիկը ծվաց եւ փախաւ կաղիւնի թուփերի մէջ, անտառային ողու նման, իսկ Աֆանասիչը, առանց շարելու հաճօյալի կերպով ժպտաց եւ մեզ ներկայացրեց :

—Սա Դաշինկան է : —Շատ հետաքրքիր է լսել, փռնչեց Բուրուրը : Բայց զուրք այդ ինչպէ՞ս... —Լսեցէք, նկատեցի ես ծերունուն, այդ տեսակ արկածներով դուք կարող էք եւ քրէական յանցանքի մէջ

ընկնել :

Նա կանգնած տեղում պըտտվեց, ու ծիծաղելով առաւիկեց :

—Դաշինկան ոչ ոքի չի յայտնի, ես նրա՞ գլխի ծածկոց կը նւիրեմ, եւ նա չի յայտնի :

—Ահա եւ ձեզ նկուղային կարսւմազովը, ասացի Բուրուրին, երբ մեծք հեռացանք : նկարից կէսը կայ : Բուրուրը հառաչելով պատասխանեց :

—Միւս կէսը փնտոել էք հրամայում : Երիտասարդ ուսանողը, ոչ իմար, զարգացած, շատ կարգացած եւ ըստ երեւոյթին լաւ աշխատող : ձեռքը շատ յոգնել էր եւ այժմ նիւրվելով թանկագին հանգստութեան, ուղիղ կենդանու կեանքով էր ապրում : —Ուսում եմ, քնում, Անիսային լիզում հրճանքով ասում էր նա : Սրկու ամիս չափ այսպիսի սարգանաբաղուցիւն անելուց յետոյ՝ թոշակի պէտք չեմ ունենայ, սեփական իւղով կերակրվելով մինչեւ զարուն քաշ կը գամ :

—Ինչ բարոյագիտութիւնը, կա-

ՏԻՈՒՐ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Երազանքներ հայ հասարակութիւնը առիթ ունեցած է ազգային խնդիրներու մէջ մեր արտասահմանի կղերին և դպրոցական պայտօնէից նկատմամբ քննադատական և նորինակ պարսաւական յօդուածներ կարդալու...

Ար որ ալ ըլլան, քահանայ թէ դաստառ գերի են վարիչ մարմնոյ գեր ունեցող եսասէր անձանց, որոնք առանց ուշադրութեան առնելու թէ իրենք համայնքուն պատկանած բարոյական հաստատութեան բարեք կառավարելուն կոչուած են, շարաշար կերպով կը գործածեն ժողովրդին իրենց վրայ ունեցած վստահութիւնն...

Գանք դաստառներուն, այս

բազմէն հալածուածներն ալ չեն սարբերի իրենց հոգեւոր աշխատակիցներէն. ամեն դպրոցական տարեշրջան մօտենալուն պաշտօնապարկ ըլլալու վախով, փոխանակ ամեն ճիգ թափելունոր մեթոտներ հնարելով հրապուրիչ ծրագրերնորով հոգաբարձութեան վստահութիւնն գրաւել պարտաւորուած կըլլան ամեն մի շոյներու դիտել օրուան մեծին հաճոյ երեւնալու համար. որպէս զի զոհ չերթան իրենցմէ անկարող սակայն վարչութեան մէկին կամ միւսին պատկանողին. ուրեմն ինչպէս ելնեմք իրենց առօրեայ հաջը ճարելու համար տքնող դաստառներէն պահանջեմք մտաւոր առողջ դաստիարակութիւն ապագայ սերնդին. քանի որ ոչ արժանիքն, այլ հաճոյական տարութիւնն է որ կը փնտռուի անոնցմէ. Ամենացաւալի կէտը դպրոցական ընդհանուր կանոնադրութիւն մը չունենալ նիս է և ի՞նչ ունենանք ալ հայութեան այս ցեր ու ցան տրամադրութեան մէջ չի պիտի կըրնանք անոր կէտ առ կէտ գործադրութիւնն ապահովել. Վերջացնելէ առաջ ամփոփելով մեր տեսութիւնները սա եզրակացութեան կը հանգրիւք թէ՛ մինչև որ մեր ազգը չունենայ հեղինակաւոր հաստատութիւն մը որ բարձրէն հակելով վերջ գնէ աշայական կամայականութեանց ապահովելով հոգեւորականին և դպրոցական պաշտօնէին նւթականը, աւելորդ է աւելին պահանջել. Մեր հիմնական պոռչտուկը ամեն պարագայի մէջ վրձնական օգուտ մը չի կրնար տալ:

Ասոնք ապագային կարգադրութիւնք խնդիրներ են. ներկայիս մեզմէ կը պահանջուի օգնել ինքնապաշտպանութեան կառուին զոր

կը մղեն մեր թշուառ եզրայրները.

ԱՆԱՀԻՏ

«ՍԵՆՔ ԳՍՂՏՆԻ ԿՐ ԳՈՒԹԵՆԲ»

Երբ հանդիպիս վեր. հնչակեանի մը եւ ուզես անոր հոգեկան տրամադրութիւնը հասկնալ՝ ան իսկոյն կը պատասխանէ քեզի. «Եսնք դադանի կը գործենք». այս նախադասութիւնը այնքան սերտած ու ըսած են որ իրենց սովորական յանկերը գարձած է այլ եւս:

Եւ իրօք ինչ գեղեցիկ նախադասութիւն է—սենք գաղտնի կը գործենք. կա՞յ արդօք հայկական բառարանին մէջ նախադասութիւն մը, որ այսքան գեղեցիկ ըլլայ. սակայն բառին եւ կամ նախադասութեան գեղեցիկութիւնը չէ որ մեզի պիտի հրապուրէ ու համոզէ. ոչ, բնու երբէք, այլ անոր գործածելու կերպը. բառ մը եւ կամ նախադասութիւն մը որքան ալ գեղեցիկ կըլլան թող ըլլան, երբ անոնք գործածելուն կերպը չը գիտնանք. անոնք կը կորսնցնեն իրենց գեղեցիկութիւնը եւ նոյն իսկ նշանակութիւնը:

Գաղտնապահութիւնը այն միակ ազգակն է, զոր անհատի մը եւ կամ կազմակերպութեան մը նկարագիրը կը որոշէ, այսինքն կը բարձրացնէ կամ կը ցածցնէ. անհատը կամ կազմակերպութիւնը որ չունին պաղտնապահութիւն, անոնք չունին եւ նկարագրի բարձրութիւն, ու կը նըմանին բաց նամակի մը. զոր ամեն մարդ կարող կըլլայ կարգալ գոյն:

Մեր կեանքին մէջ չենք կարծեր որ գտնուին մարդիկ որոնք շուզեն սիրել գաղտնապահութիւնը. որովհետեւ ինչպէս ըսինք իր նկարագրի բարձրութեան կը նպաստէ. ամեն մարդ որ շատ քիչ բանականութիւն ունի եւ կարող է բան մը հասկնալ, ան անպատճառ կը սիրէ ըլլալ միշտ գաղտնապահ եւ ինչո՞ւ չըլլայ, չէ՞ որ միայն գաղտնապահութեամբ գործելով է որ պիտի կրնայ յաջողիլ իր ձեռնարկած գործին մէջ:

Մեր վերակազմեալ հնչակեան հակայեղափոխան խմբակը որ միայն ը-

սած է եւ գաղտնապահութիւնը բառուած բառին նշանակութիւնը անգամ զեռ չի հասկնար. կը փորձէ շարաշար կերպով գործածել գոյն:

Չարմանալի մարդիկ են ասոնք. իրենց ունեցած ամբողջ գործունէութիւնը հրապարակուած է արդէն, բայց երբ կը փորձեն իրենց հետ խօսիլ ու փաստել թէ իրենք գործ չունին մայր երկրին մէջ. ունեցածնին միայն արտասահմանի մէջ է. եւ հրապարակը, իրենք իսկոյն կը պատասխանեն քեզի «Եսնք գաղտնի կը գործենք»:

Ասենք թուրքոյն ի... գաւառին մէջ կառավարութիւնը գործ կը նաւաքէ եղեր. ոստիկանները երբ... գիւղը կերթան թուրքի մը տունը կը պաշարեն եւ կը զանաւն բռնել ու տանել. սակայն թուրքը որ նախօրօք լսած էր կառավարութեան այս մտադրութիւնը, իր մէկ դրօշին տունը կը պանուրտի ու կը պատուիրէ իր իր մասին ու եւ է մարդու բան չըսեն. աչք դրացիին կերն որ լսած էր պատուէրը. որպէսզի չըլլայ ԿԻՄ մտնայ եւ մէկէն ինչի մարդու բռնէ, շատ անգամ իրեն իրեն կրակ եղեր թէ... Բիւշու՛ համար ու եւ է մէկու մը պիտի յայտնեմ թէ Մ...ր մեր տունը պահուշտած է՝ ոչ, ես այդպէս բան չեմ ընեմ յո՞ եւ օր մը երբ փողոցին մէջէն քալած ժամանակն ալ նոյն բանը կը կրկնէ չը մտնալու համար, կը հանդիպի յիշեալ ոստիկաններու. ոստիկանները լսելով այս իսկոյն կը հարցնեն «Ինչ է. ինչ կայ որ», թրքուհին իր թէ ոստիկաններու ու եւ է բան չը պիտի յայտնէ կը պատասխանէ «Ե՛հ թան չըկայ ճանրմ, ինչու համար օտե՛ք մէկու մը պիտի յայտնեմ թէ Մ...ր մեր տունը պահուշտած է. ոչ, բնու երբէք ես այդպէս բան չեմ ընեմ ոստիկանները լսելով այս, իրենց նպատակին հասած կը նկատեն եւ անմիջապէս կերթան տունը ու թուրքը կը ձերբակալեն...»

Թրքուհին իր դրացի թուրքին պատուէրը չը մտածուի համար դարձ. եալ իրեն յանկերը կը կրկնէ, եւ ալ բան չունի յէ թող կրկնէ մինչև իր կեանքին վերջը:

Ճիշդ եւ ճիշդ այս թրքուհին դերն

տակուած էի ես. իսկ նա ուրախօրէն առարկուած էր.

—Բարոյագրիտութիւնը. բարոյագրիտութիւն չեմ ուզում. այս վայրկեանիս այդ ես չեմ կորոզ ունեւաւերելու ամսի համար ես ինձ անասունի եմ վերածել. իսկ անասուններին մօտ բարոյագրիտութիւնը գոյութիւն չունի:

—Օհ, օհ, բայց դուք սոլստոյական էք:

—Չմեղը, բայց հիմա անկարող եմք. ոչ միայն սոլստոյական այլ բուն Տօլստոյ էլ գործնէք ինձ, չեմ ուզում. ես հիմա հաստ եմ ուզում լինել:

Ո՛հ, ուրախութիւն, կատարելագործվում եմ. նպատակիս հասնում. արդէն կատակաստութիւններս էլ անասնային են դարձել. իսկ օգուտ զգացվում է կարկանդակի եւ շեռտացած իւզի հօտը, որք ինձ աւետում է Անիսայի ինձ տալիք ամենահամեղ խմորեղէնի մասին... Գարունը համեղ ուտելիք, իսկ ձմեռը բարոյագրիտութիւն:

Եւ ուրախ, տարօրինակ ուսանողը

թոշուած էր զէպի խոհանոց վազելիս աշաղակելով.

—Անիսա, մարդկային քեզի մխիթարութիւն, կարճ կերպով ինձ բացատրի թէ քո կարծիքով ինչն է լաւ. անուշացած բարոյագրիտութիւնը թէ անուշեղէնի բարոյագրիտութիւնը: Անշափելի Անիսայի ժողտուած էր մայր մտնող արեւի գոյն եւ ձեւ ունեցող զէմքով եւ առարկում.

—Այ դուք անամօթ, էամօ բաներ կասէք...

Նոր հիւրեր չէին գալիս:

—Միշտ այսպէս է լինում, յայտնեց ինձ Արինան, տօնախմբութեան միջոցին այնքան մարդ է հաւաքվում որ չը գիտես թէ ուր տեղաւորես. իսկ յետոյ, մի ամսի չափ, դանակով կտրածի սլէս է լինում. ոչ ոք չէ երեւում.

Ամենալաւ ժամանակն է, ով մեզ մօտ հանգստանալու համար է գալիս. հանգստութիւն...

Եւ իր անհաճելի ժպիտով սեւեղանում էր.

—Այժմ նրանք աներում են նրս

տում, իսկ կիներն էլ կրծում են՝ մի թափառեցէք Պրովօսայում. նրեւէրներ մի տօրէք Քալիբաին:

—Ինչ...

—Այսպէս մեր գաւառի արկիւնները հայնոյում են օրիորդին. որովհետեւ յիմար են. գտել են Քալիբաին. մեր օրիորդը թարմ վարունկի է նըմանում. Իրանք քալիբաիններ են. այդ պատճառով էլ ամուսինները փախչում են:

—Քալիբաին չէ, Արինա, կարելի է կալիպսօ լինի մի յաւերժահարս կարորին կալիպսօ էին անւանում:

—Այո, այո, յաւերժահարս էլ են անւանում, բայց օրիորդը ինչ յաւերժահարս է, իրենք են. չար: Այ, վանիչկաս, անցեալ օր քաղաքից եկել էր եւ պատում էր թէ Պետր Պետրովիչի Անիկը խեղճ յօրուսի մի կտորը փրցուցել է: Կիներն էլ չէ, սիրուհի է, բայց զէմքին էլ է գարկում. Յիմար է Պետր Պետրովիչը, պառաւ անբարոյական է: Է՛հ, ամէնքն էլ յիմար են. անսպասելիորէն եզրակացրեց:

Եւ անբարոյականն են, արդէն Ա-


րինայի օյիւններին վարժուած անվրդով հարցրի.

—Եւ անբարոյական:

Վանիչկան սուրհանդակի նման ամէն շաբաթ օր գալիս էր. միշտ բեռնոված կուպոններով եւ ծաղիկներով, որ զրկում էին վիկտորիայի յողաքացի յարկակամները: Այդ երիտասարդը ինձ զոր էր գալիս իր հոգին է. գիտէ իր տեղը եւ արժանաւորապէս պահպանում է իր այդ գիրքը:

Դեմքով մօրը շատ էր նմանում, բայց աւելի հակակրեւի եւ կակուղ արտայայտութիւն ունէր:

Շարունակելի



ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

է զոր ստանձնած են մեր վեր, հըն- չակեան հակադատութեանը ե- թէ կայ տարբերութիւն մը, միայն այն է որ ասոնք իրենց չունեցածը գաղտնի կը պահեն, իսկ ունեցած- նուն մասին, ո՛ր, հայկական բառա- բանի բառերը շատ կարճ կուգայ ի- րենց, եւ օտարականներէ ալ բա- րեր կը գողնան ու կը խօսին եւ հը- րապարակ կը գործարկեն...

Անցեալները երբ կը խօսէի վեր- հնչ, հանրաձայնօթ հակադատութեան կան պարտնի մը հետ կը պատասխա- նէր ինձի «ի՛նչ է աղբար դուք բան չէ՞ք հասկնար, մենք ձեզի կըսենք ու կը գրենք թէ, գաղտնի կը գոր- ծենք, դուք չէ՞ք կրնար մեր գոր- ծունէութեան մասին բար մը իսկ ը- սել ու խօսիլ»:

Ի՞նչու, պատասխանեցի ես, մի- թէ՞ մենք մատնիչներ ենք որ: «Ո՛չ, դուք մատնիչներ չէք, այլ որովհետեւ մենք գաղտնի կը գոր- ծենք»:

Ու երբ մի քանի անգամ կրկնեց թէ «մենք գաղտնի կը գործենք» եւ իրեն պատասխանեցի թէ դուք գաղտ նապահութիւն ըսուած բանը դեռ չէք հասկնար, ոչ միայն մենք իրա- ւունք ունինք խօսելու մեր գործու- նէութեան մասին, այլ եւ ամբողջ հայ ժողովուրդը, վասնզի յեղ. գոր- ծը, ոչ ձերն է եւ ոչ ալ մերն է, այլ հայ ժողովրդի ազատագրութեան գործն է, եթէ դուք այսօր կըսէք ու կը գրէք թէ գաղտնի կը պատ- բառուէք ու գաղտնի ալ կը գոր- ծէք, աս ամենախայտառակ սուտ մըն է, դուք գործ չունիք արդէն, ալ ի՞նչպէս գաղտնի պիտի ըլլայ:

Ո՞վ ըսաւ թէ մենք գործ չունինք երկրին մէջ, միթէ՞ մենք խուճը չունինք, ֆէտայի չունինք, միթէ՞ մեր ֆէտայիները կուրի չեն բոնը- լիք որ, խուճը ալ ունինք ֆէտա- յի ալ՝ բայց երբ մեր ֆէտայիները կուրի կը բռնուին եւ կամ զենքերն ու գործիչներ կը ձերբակալուեն մենք անոնց մասին ու եւ չէ խօսք չենք ը- սեր եւ կամ գրեր մեր թերթերուն մէջ»:

Սուլթանէն գաղտնի պահելու հա- մար անշուշտ, պատասխանեցի ես, «Հապա ի՛նչու»:

Բայց չէ՞ որ սուլթանը արդէն գի- տէ ատոնք:

«Ի՛նչպէս գիտէ»:

Չէ որ իր զօրքերու հետ է որ կուրի կը բռնուին մեր ֆէտայիները եւ նոյնպէս իր զօրքերն է որ կը ձերբակալեն մեր զենքերը եւ գոր- ծիչները:

«Մենք աս գիտենք, բայց որպէս զի մենք ցոյց տանք հայ հասարա- կութեան թէ իրօք մենք գաղտնի կը գործենք, պէտք է որ բան չը գրենք»:

Հիմա հասկցայ մեր գաղտնի գոր- ծելը, դուք կուզէք որ միայն հայ ժողովուրդէն գաղտնի պահէք մեր գործերը, իսկ սուլթանէն, ո՛չ, այն- պէս չէ՞ մի:

«Ո՛չ, այդ սխալ է»:

Հապա ի՛նչու չէք ուզեր գրել, բա- ցարեւ մեր թերթերուն մէջ, որ հայ ժողովուրդը ինքն ալ իմանայ եւ գիտակից ըլլայ իր վիճակին:

«Չէ՞ որ մենք կըսենք թէ գաղտնի կը գործենք, ի՛նչպէս կրնանք ընել»:

(Շարունակելի)

Սօֆիայի համալսարանի վար- չութիւնը ուսանողներուն համար նոր կանոնագրութիւն մը հիմնե- ր է, որուն թելադրութեամբ ուսա- նողներուն ազատութիւնը կը ճըն- շտի:

Սօֆիայի ուսանողները անցեալ օր 700 հոգիէ բաղկացած ժողով մը ունեցեր են, Այդ ժողովին խօսք են ուսանողներ հիմնադրութիւնը ու բողոքագիր մը պատրաստեր, որով նոր կանո- նագրութեան բարձուժը կը պա- հանջեն:

Ուսանողներէն ընտրուած պատ- զամուտութիւն մը այդ բողոքա- գիրը պիտի մատուցանէ համալ սարանի վարչութեան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

— Թուրք կառավարութիւնը մտադիր է պատերազմական նա- լեր զրկել Կրէտէ:

— Կառավարութիւնը ընդունեց Աւստրիայի առաջարկած միջազ գային կօնթրօլի ծրագիրը Մա- կեդոնիոյ ելեւմտքի բարենորոգ- ման մասին:

— Գերմանիոյ մէջ 60 միլիոն ֆրանքի փոխառութիւն կնքելու իրատէն ելած է: Ֆրանսայի մէջ կնքելուն իրատէն ալ մօտերս կսպասուի, թէեւ գերմանական դեսպանի հակազդեցութեան շը- նորհիւ քիչ մը յետաձգուած է:

ԻՌՈՒՍԻԱ

Ճարսկոյէ Սէլօ, ուր կապրի ցա- րը, հասած են Դոնի խաղախնն- րու քանի մը վաշտեր, ինչպէս կերելի ցարը պահպանելու հա- մար:

— Սարի պալատին մէջ ձեր- բակալուած է մարգ մը, զնգա- պետի զգեստով, քովը երկու ումբ գտեր են, բայց իր անու- նը չեն կրցեր հասկնալ:

— Նախարարներու խորհուրդը ընդունած է լեհական նահանգ- ներու երկրորդական դպրոցնե- րուն մէջ գասուանդութիւնը Լեհ լեզուով կատարուելու առաջարկը:

— Մոսկուայի մէջ կազմակեր- պուեր է երկու կուսակցութիւն- ներ, ազգային և յառաջգիմա- կան, որոնք պատուիրակներ պի- տի զրկեն Չեմսկի ժողովին, երբ ան արտօնուի:

— Մոսկուայի նահանգին բը- ժիշկներուն ժողովը, զոր արգիլ- ուած էր Պուլիկին տեղապահին հրամանով, նախարարի արտօ- նութեամբ տեղի ունեցեր է, ժու- ղովին առաջին գործը եղեր է

յունվարեան զոհերուն յիշատակը յորդիլ օտքի կանգնելով: Իժըշ կական ժողովը որոշեր է սահմա- նագրութիւն պահանջել:

— Վարչապետի մէջ հրէաներու և զօրքերու միջեւ ընդհարում տեղի ունեցեր է, երկու կողմէն ալ սպաննուածներ կան:

— Ռուսական ներքին փոխա- ռութիւնը մեծ յաջողութեամբ տեղի ունեցեր է:

— Պաքուէ Դրօշակին կը հաղորդեն որ Պաքուի նահանգա- պետը պատմելը որոշուած խնդիր է տերօրասիրական կազմակեր- պութեան կողմէն:

— Կառավարութիւնը ճիգեր կը թափէ Պաքուի անցքերուն յան- ցանքը կօմստէներուն վրայ ձգել: Այդ առթիւ քննիչ յանձնախմբին մասնակցող հայերը հրապարակաւ բողոքած են:

— Կովկասցիք շատ ալ գոհ չեն Վարանցով Դաշկովի փոխարքայ նշանակուելէն, որովհետեւ վեր- ջինս բոլորովին յետադիմական է:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Ինթերսպուրկէն մարտ 24ին կը հեռագրեն որ Մանչուրիոյ առաջ քարքը վերջին օրերու հան- գատութենէն յետոյ ջերմփափաք ունի կրկին պատերազմուելու:

— Բեթերսպուրկի մէջ հաշ- տութեան մտադրութիւնը բոլոր- րովին թողուած է: Կառավարու- թիւնը կարեւոր թերթերու խմբ. բաղրապետներուն հրահանքով է այդողով յօգուածներ գրել:

— Ճարնացիները՝ գժգոհ են պատերազմական գործերու դան- գաղ ընթացքէն և կը պահանջեն որ Խարպինն ու Վլատիվօսթօքը շուտով զբաւուին:

— Լոնտօնէն մարտ 23ին կը հեռագրեն որ Վլատիվօսթօքի նաւահանգիստը շուտով բոլորո- վին սառուիցէ ազատ պիտի ըլլայ:

— Ճարնական գլխաւոր թեր- թերը կը յայտարարեն որ Ճա- րոնիան երբեք չի համաձայնիր հաշտութիւն կնքել, մինչեւ որ Ռուսիան անկեղծօրէն չի համա- ձայնի երկարատեւ հաշտութիւն մը կնքել:

— Ռուսիոյ պատերազմական նախարարը յայտարարած է որ երբոր երկու թշնամիներու զօր- քերը հաւասար քանակութեամբ ըլլան, ինքը չի կօսկածիր առ- սական յաջողութեան մէջ: Մուք- աէնի պարտութեան պատճառը պէտք է փնտռել ուսաներութիւն- դանօթներու քիչութեան և ճա- րոնական զինուորին լաւ պատրաս- տուած ըլլալուն մէջ:

ՄՐԱՅ ՍԱԷՏԻՆԵՆԻԷ

ԳՈՂԹԱՆ ԵՐԳ. Խուճըս յառաջի- կայ հիմնադրութի գիշեր ի նպաստ Վառնայի Աղջ. Վարժարանի աղ- քատ սաներու և սանուհիներու պիտի ներկայացնէ:

Շէճի ձԵԼԱԿԵՏԻՆ  
Թատերախաղ 4 արարուած  
ԵՐԳ, ՆՈՒԱԳ, ԵՒ ՍՈԼՈ

Կը յուսանք որ Վառնայի հայ հա- սարակութիւնը այս անգամ ալ չպիտի զլանայ իր փոքրիկ նուէրներով ու- բախացնել աղքատիկ սաները եւ սա- նուհիները զատկուայ ուրախ օրե- րուն:

Վարչութիւն  
ԳՈՂԹԱՆ ԵՐԳ. ԽՈՒՐԻ  
Վառնայի

ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Մեր Մասնաճիւղնրու և ընկերնե- րու ըրած հարցին, հրապարակաւ կը պատասխանենք թէ, Մասնաճիւղիս հասցէն նոյնն է. (Մ. Ն.) և «Երիտա- սարդ Հայաստան» ժամանակ Եւրոպայի թիւ 694ին մէջ եղած յայտարարու- թեան հասցէն ու X.XX կեղծ անու- նը Մասնաճիւղիս հետ ու է անշու- խիւն չունի. հետեւաբար Հնչակեան Մասնաճիւղերը կը զոգուցանենք որ այդ հասցէին ու է պաշտօնական թղթակցութիւն չի կատարեն:

Հնչ. Սօց. Յեղ. Կուսակցութեան  
Ֆիլիպէի Մասնաճիւղի  
Վարչութիւն  
(Կնի՛ք)

Ֆ Ի Լ Ի Պ Է Ի

Գրասիրաց Եղբայրներ  
(Հաստատուած 1883ին)

Ընթերցարանը բաց է բոլոր գիշերները, կիրակի և չորեքշաբ- թի գիշերներէ զատ: Կիրակի բաց է ամբողջ օրը, տօներուն կէս օրէն ետքը միայն Մատենադարանէն գիրք կը տրուի կիրակի առաւօտները: Հայ հեղինակներէ շնորհակա- լութեամբ կատարուին նուէրներ: Վարչութիւն

Շուճայի-Պետո. Պուլկարացիս ըն- թերցարանին մէջ կը ծախուի Հայ Յեղ. Դաշնակցութեան բարձրագոյն- զակ ոսկեզօծ գինանշանը քաճէ խիտ շքեղ պատրաստուած 49—43 սն. մե- ծութեամբ, Արձանագործ Պ. Խորէն Փափագեանէ, որ գեղարուեստական գնահատելի գործ մըն է:

Կարժէ որ ամեն հայ ուղանալ- ցական ընկեր ունենայ ան իր սեն- եակին մէջ:

Գինն է 10 ֆրանք կանխիկ, գրեւ Շուճայի Պետո. Պուլկարացի ընթերցարանի վարչութեան:

Отговорникъ  
Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна